

## ԳՐԱԽՈՍՍԿԱՆ—ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

Travel and Politics in Armenia, London, 1914.

«Ճանապարհորդութիւն եւ քաղաքական կեանք»

Հայաստանի մէջ» Լօնդոն, 1914.

«Արարատ»ի խմբագրութիւնը շնորհակալութեամբ ստացել է վերոյիշեալ վերնագիրն կրող գեղեցիկ անզգիերէն հրատարակութիւնը, որ գրել են Բըքստըն ազգանունով երկու եղբայրները, որոնցից մէկը Անգլիոյ պարլամենտի անդամն է, իսկ միւսը քահանայական աստիճանով հոգևորական։ Այդ երկու համակրելի եղբայրները, լցուած ցանկութեամբ անձամբ տեսնելու Հայաստանն ու նորա դարերով տառապած ժողովուրդը, անցեալ տարի աշնանը, ընկերակցութեամբ յարգելի Արամ Ռաֆիու եկել էին ս. էջմիածին, ներկայացել էին Վեհափառ Կաթուղիկոսին, դիտել ս. էջմիածնի հնութիւնները և ապա Պարսկաստանի վրայով անցել Տաճկահայաստան։ Անձամբ ծանօթանալով ոռւսահայերին և մանաւանդ տաճկահայերին, իրենց ճանապարհորդական նկարագրութիւնները, այլ և անձնական խորաթափանց դիտողութիւնները գրի առնելով տալիս են անզիփական, և առհասարակ եւրոպական գրականութեան մի նոր գիրք «Ճանապարհորդութիւն և քաղաքական կեանք Հայաստանի մէջ» վերնագրով, հարստացնելով Հայաստանի վերաբերեալ ուսումնասիրութիւնների շարքը։ Բըքստըն եղբայրների ճանապարհորդութիւնը աւելի քան ժամանակակից էր, որովհետեւ նորա անձամբ դիտելով հայ տառապած ժողովրդի կեանքը, հայի առանձնայատուկ օջախը, նոցա «քաջ և անվիճեր ոգին»՝ դէպք ունեցան՝ համարեա իրենց ճանապարհորդութիւնից անմիջապէս յիտոյ, Փարիզի Միջազգային ժողովում մնեծ թափով պաշտպանելու Հայկական դատ և առանձնայատուկ պարզութեամբ բացատրելու քրիստոնեայ պետութիւններին դրական և շուտափոյթ օգնութեան անհրաժեշտութիւնը<sup>1)</sup>, Բացի դուրանից, երբ յունիսի 13-ին Հայկական Միացեալ Ընկերութիւնը

1) Տես Միլիկովի յօդաւծը «Արարատ» 1914 թ. յունու արի համարում էջ 56, 57։

լոնդոնի ամենայայտնի հիւրանոցում մի ճաշ է տուել ի պատիւ պ. Նոէլ Բըքստընի ամուսնութեան՝ վերջինս իր ճառում ըխանս դավառութեամբ խօսել է հայ ցեղի յատկութիւնների նկատմամբ, չեշտելով մասնաւորապէս հայի ընտանեկան իդէալները: Նա ասել է, որ հայ ցեղի իդէալը սերտ կերպով կապուել է ընտանեկան օջախի և տաճարի հետ, հէնց այդ հողի վրայ հայ ժողովուրդը տառապել է ամենից շատ Հայի օջախը սրբազնութել է և նորա տաճարը արատաւորուել է: Բոլոր ազատարարների համար էականապէս անհրաժեշտ է յիշել այդ ճշմարտութիւնը և ապահովել նրա օջախը սրբազնութեան դէմ և նրա ազատութիւնը՝ կրօնական պաշտամունքի վայրերում: Դրանք, մարդկային տարրական այդ իրաւունքները, անազգուել են դարերից ի վեր»: «Ե՞ր և իր եղրօ՞ Հերօլդ Բըքստընի ուղերութեան ընթացքում,—նա աւելացրեց, —իրանց վրայ խոր ապաւորութիւն էր թողել հայերի արտասովոր քաջութեան և էներգիայի փաստը: Հայերը ցոյց են տալիս մեծ հուանդ որպէս զաստիարակիչներ, և այցելողների ուշադրութիւնը զրուել էր, որ հայ ցեղը, որի ամբողջ քաղաքակրթական գոյութիւնը խորակուել էր մի կատակ լիզմով, դեռ չը սառած՝ իր հրդինուած օջախների ամիւնները, ծրագրում էր նոր պլաններ, կառուցանելու նոր դպրոցներ և կօլլէջներ»: Ապա ակնարկելով հայերի հայրենասիրական զգացմունքների վրայ՝ ասել է. «Հայերից աւելի ոչ մի ուրիշ ցեղ արտազրել է մարդիկ՝ պատրաստ մեռնելու ազգային գաղափարի համար: Նրանց ազգային իդէալն անբաժանելիօրէն կապուել է ազգային եկեղեցու հետ և հայ ցեղի քաղաքակրթութեան դատին նույնուած լինելն էր, որ էական է դարձնում նրանց ազգային գարգացման լիազոյն առիթներ ստեղծելու հարկը»\*):

Ահա և այս յարգելի Բըքստըն եղբայրներն են՝ որ զրել են վերոյիշեալ վերնագրով զիրքը, որը բաղկացած է վեց գլուխներից, Առաջին զիսում նկարազրում են քիւրդերի կեանքի պայմանները, երկրորդ և երրորդ զլուխներում թրքահայ և ոռւսահայ ժողովրդոց կեանքը, ունեցած անցուղարձը: Չորրորդ զլուխը յատկացրել են հայ եկեղեցուն, որտեղ մեծ յարգանքով ներկայացնում են նորապարզութիւնը, անկախութիւնը և ազատախոնութիւնը հին եկեղեցիների մէջ: Հինգերորդ զլուխը խօսում են մահմեդական պետութիւնների մասին և առաջ են բերում հայերի դէմ զործածուածանիրաւութիւնները և տեղի ունեցած կոտորածները: Իսկ վերջին վեցերորդ զլուխը խօսում են Եւրոպական պետութիւնների Հայաստանի հանդէպ ունեցած դերի մասին:

\* ) Տիւ «Մշակ» 1914 թ. № 440 Առնդոնից Թղթակցութիւն:

Ամբողջ գիրքը զրուած է կենդանի կերպով, որովհետև իբենց անձնական զիտուութիւնների արդիւնքն է բոլորը, Մանաւանդ հեր հայերի քրդերի կողմից կրած հալածանքների ու դառնութիւնների մասին են խօսում՝ շատ հեղինակաւոր և ազգու են նոցա խօսքերը, որովհետև Հայաստանի մէջ ճանապարհորդութեան ժամանակ իրենք ևս հնդարկուել են քրդերի յարձակման և կրել են մահուան տագնապալից վայրկեաններ, բայց բարերախտաբար անվտանգ պատուել են:

Ակզրից մինչեւ վերջը ընթերցազը նկատում է՝ որ Բըքստըն եղայրները աշխատել են նկարագրել հայերի տառապանքները քաւական անտէպա և փաստացի եղանակով Աշխատել են նորա իրենց գրքով վերստին Եւրոպական պետութիւնների գութը շարժել յօզուա հայկական դասիւ

Բացի վերոյիշեալ վեց գլուխներից, գիրքը բովանդակում է իւր մէջ նաև յարդելի պ. Արամ Ռաֆֆու \*) գրած հետեւեալ երեք գլուխները, ա) Հայաստանի պատմական անցեալը, բ) Հայերի ներկայ դաստիարակութիւնը և զ) Հայ ժողովրդի էական յատկանիշները. Արամ Ռաֆֆին այս երեք գլուխները գրել է շատ հիանալի և սահուն ոճով և որոնք անշուշտ կարեոր են հայը օտար ներին ծանօթացնելու տեսակէտից:

Գրքի վերջին մասում դրուած է Հայաստանի ընդարձակ մէկ քարտէզը և 61-րդ յօդուածի բովանդակութիւնը. Ամբողջ գիրքը բաղկացած է 274 էջերից 8<sup>o</sup>, որտեղ շատ որոշ կերպով Եւրոպացիների առաջ պարզւում է հայի կեանքն իր ամբողջ փուլեռով, իբրև ժուժկալ, աշխատասէր և քաղաքակիրթ ազգ արեեւեան ցեղերի մէջ. Գիրքը զարգարուած է հայկական և քրդական կեանքից վերցրած լուսանկարչական պատկերներով, կան նաև հայ եպիսկոպոսի, երկանի, ա. էջմիածնի և Վարագայ վանքի պատկերները:

X.

\*) Մեր անմահ վկասան Բաֆֆու որդին է: